

ըմբռնելով՝ թոյլ տան անոնց որ ամէն տեղ մեր պետութեանը մէջ ազատապէս առեւտուր ընեն, եւ այս բանին մէջ չյանդգնին ոչ իրենց անձը եւ ոչ իրենց ստացուածքը վրդովել կամ վնասի ենթարկել»:

Այս հրովարտակին տուած քաջալերութեամբ էր որ հայերը հետզհետէ տեղաւորուեցան Թրանսիլվանիոյ մէջ: Բայց որովհետեւ տեղ տեղ խորթ աչքով դիտուեցան ուրիշ տեղական ցեղերու կողմէ իրբեւ մրցորդ տարր, եւ նոյնիսկ սկսան սեղմումներու եւ ճնշումներու ենթարկուել իշխանութեանց կողմէ, նոյն Արաֆի իշխանը 1689 Սեպտ. 1-ին նոր հրովարտակով մը հրամայեց. «Պահանջատէրերէն ոչ ոք համարձակի այսուհետեւ հայ մը՝ բացի անկէ որ բան պարտական է՝ բանտարկելու կամ բանտարկել տալու. ամենեւին չյանդգնի մէկը հայերը անհանգիստ ընելու եւ անոնց անձին վնաս հասցնելու: Ամէն պահանջատէր իր յատուկ պարտականը կրնայ ստիպել որ պարտքը վճարէ. որովհետեւ մէկը միւսին համար ամենեւին պարտական չէ հատուցում ընելու, եւ այլն»:

Թրանսիլվանիոյ մէջ հայերը հետագային ալ ազատութիւններ եւ դիւրութիւններ վայելեցին: Վկայ են Արաֆի Բ. իշխանին 1696 Փետր. 7 թուակիր հրովարտակը, ինչպէս նաեւ Լէոփոյտ եւ Կարոլոս Զ. կայսրերուն, Մարիա Թէրէզա կայսրուհիին եւ իրենց յաջորդներուն զանազան հրովարտակները՝ որոնց մասին խօսեցանք ասկէ առաջ, հայոց վայելած քաղաքական իրաւունքները բացատրած ատեն:

Բայց ինչ որ աւելի շահեկան է Թրանսիլվանիոյ հայ զաւգութին առեւտրական կեանքին մէջ, անոնց կազմած առեւտրական եւ արհեստակցական ընկերութիւններն են: Տեսակ մը ինքնապաշտպանութեան բնազդ՝ ստիպեր է զանոնք քով քովի գալ եւ հաւաքաբար պաշտպանուիլ օտարներուն դէմ: Ընկերակցութեան սոյն ոգին՝ հազուադէպօրէն կարելի է նշմարել այլուր, եւ արդար է հետեւաբար պահ մը ծանրանալ այդ ընկերութիւններէն գլխաւորներուն վրայ:

ՄԱՇԿԱԳՈՐԾԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Կէռլայի հայ խաղախորդներուն (սուրուկ-ձի) ընկերութիւնն էր, 1700-ին հիմնուած Վըր-

զարեան եպիսկոպոսին կողմէ: Ինչպէս յայտնի է՝ խաղախորդութիւնը Թրանսիլվանիոյ հայութեան մէջ ամենէն բանուկ արհեստն էր, զոր սորված էին իրենց պապերէն, Թրանսիլվանիա գալէ առաջ: Անոնց կանոնադրութիւնը՝ խումբադրուած 1700 Օգոստոս 1-ին՝ կը սահմանէ որ եղբայրակցութեան անդամները հաւատարիմ պիտի մնան իրենց եկեղեցիին, պիտի ընտրեն իրենց «եղբայրակցապետը», որուն պիտի հնազանդին, ամէն տարի Աստուածածնի տօնի օրը պիտի խոստովանին եւ հաղորդուին, հեռու պիտի մնան զխոթենէ եւ շոայլութենէ, նիւթապէս պիտի օգնեն եկեղեցիին, չպիտի թերանան իրենց հոգեւոր պարտականութիւններուն մէջ, եւ այլն:

Սոյն եղբայրակցութեան մաս կը կազմէին նաեւ Կէօրկէնի հայ խաղախորդները:

Կարոլոս Զ. կայսրը 1706 Մայիս 24 թուակիր հրամանագրով մը վաւերացուց եղբայրակցութիւնը, որուն շնորհուած արտօնագիրը կը ճշդէ եղբայրակցապետին ընտրութեան, անդամագրուելու, աշկերտ բանեցնելու եւ այլն պայմանները:

Կարոլոս կայսրը 1736-ին նոր արտօնութիւն մը տուաւ «Արտօնացեալ ընկերութեան խաղաղորդաց հայաքաղաքի» (Ceha privilegiata Cardonum Armenopolitanum):

Սաղախորդութիւնը վերապահուած էր հայերուն՝ որոնք օտարին չէին յայտներ իրենց արհեստին զաղտնիքը: Մարիա Թէրէզա կայսրուհիին օրով, 1770 Յուլիս 24-ին, յանձնաժողով մը եկաւ Կեռլայ եւ գրաւոր ներկայացուց 13 հարցումներ՝ հայ խաղախորդներու թիւին, անոնց գործածած նիւթերուն, անոնց հայթայթման, դինին, տեսակներուն, վաճառման շուկաներու մասին, եւ այլն: Ընկերութիւնը պատասխանեց այս 13 հարցումներուն ալ:

Սաղախորդութիւնը անկման շրջանի մը հասաւ 19-րդ դարու վերջին կիսուն, երբ դադրեցաւ կարմիր կօշիկի գործածութիւնը, եւ ցանցառ դարձաւ այժի կաշիի պատրաստուած կաշիի գործածութիւնը:

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Ընկերութիւնը հաւանաբար 1718-ին հիմնուած է, — այդ թուականէն ըլլալով անոր ամենահին արձանագրութիւնը: